ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում» թեմայով Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գիտելիքահենք տնտեսությանն անցումը հիմնովին փոխել է նորարարության բնույթը: Գիտահետազոտական գործունեությունը չի կարող զարգանալ արտադրական գործընթացներից մեկուսացված: Այժմ տնտեսությունն ինքն է ձևավորում գիտական մշակումների պահանջարկը՝ ստեղծելով կայուն կապ հիմնարար գիտության և շուկայի իրական կարիքների միջև: Ժամանակակից տեխնոլոգիաների բարդության պայմաններում առանձին ձեռնարկությունների համար դժվար է ինքնուրույն տիրապետել անհրաժեշտ գիտելիքի, ինչն էլ չափազանց կարևոր է դարձնում ձեռնարկությունների և գիտահետազոտական հաստատությունների, այդ թվում՝ բուհերի միջև համագործակցությունը: Բուհերի և ձեռնարկությունների միջև արդյունավետ համագործակցությունն առաջնային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Այն կարող է բարձրացնել շրջանավարտների զբաղվածությունը, նվազեցնել աշխատաշուկայում առկա անհամապատասխանությունը, արդիականացնել բարձրագույն կրթությունը և բարելավել որակը, ամրապնդել կրթական արդյունքների և ձեռնարկությունների կարիքների միջև համապատասխանությունը: Բուհ-ձեռնարկություն արդյունավետ համագործակցությունը կնպաստի նաև նորարարական ներուժի և մարդկային կապիտալի զարգացմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ու տնտեսական աճին: Ժամանակակից գիտելիքահենք տնտեսության պայմաններում բուհերի և ձեռնարկությունների համագործակցությունը անհրաժեշտություն է մրցունակության բարձրացման, նորարարական զարգացման, սոցիալական առաջընթացի ապահովման համար:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակը ՀՀ-ում բուհ-ձեռնարկություն գործընկերության զարգացման ներուժի ու ներկա վիճակի վերլուծությունն է, դրա ինստիտուցիոնալ, կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև գործընկերության մշտադիտարկման և առաջխաղացման համապարփակ մեթոդաբանական շրջանակի մշակումը:

Ըստ ատենախոսության նպատակի սահմանվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բուհ-ձեռնարկություն գործընկերության տեսական և մեթոդաբանական հիմքերը՝ բացահայտելով դրա էությունը, դերակատարներին և զարգացման արդի մոտեցումները,
- վերլուծել բուհ-ձեռնարկություն համագործակցության հիմնական կառուցակարգերը, ինստիտուցիոնալ կառույցները, տեխնոլոգիաների փոխանցման մեխանիզմները և շահակիցների միջև փոխազդեցության առանձնահատկությունները,

- ուսումնասիրել Եվրոպական միության երկրների և Հայաստանի բուհ-ձեռնարկություն գործընկերությունը խթանող քաղաքականության շրջանակները, եռաբարական էկոհամակարգերը, իրավական կարգավորումները, մտավոր սեփականության պաշտպանության մեխանիզմները և միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցության փորձը,
- գնահատել Եվրոպական միության ընտրված երկրներում, անցումային տնտեսություններում և Հայաստանում բուհ-ձեռնարկություն գործընկերության զարգացման մակարդակը՝ հիմնվելով նորարարության, հետազոտությունների, համագործակցության և աշխատաշուկայի ցուցանիշների վրա,
- գնահատել Հայաստանում բուհ-ձեռնարկություն գործընկերության ներկա վիճակը՝ բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների/շրջանավարտների և պետական կառավարման մարմինների տեսանկյուններից,
- բացահայտել Հայաստանում բուհ-ձեռնարկություն համագործակցության զարգացմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ, իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմնական խնդիրներն ու խնդրահարույց հարցերը,
- վերլուծել ՀՀ բարձրագույն կրթական հաստատություններում կիրառվող համագործակցության ուղիների և ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմների արդյունավետությունն ու կիրառելիությունը:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության տեսական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները, ինչպես նաև ստացված արդյունքներն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Բուհ-ձեռնարկություն գործընկերության տեսական շրջանակը» գլուխը նվիրված է հիմնախնդրի տեսական հիմքերի ձևավորմանը, որի համար ուսումնասիրվել են գոյություն ունեցող մոդելները և հայեցակարգերը: Քննարկվել են դրանց բաց կողմերը և հիմնավորվել է դրանց լրացման անհրաժեշտությունը: Այդ նպատակով փորձ է կատարվել մշակվել «Բուհ-Ձեռնարկություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ» ընդլայնված մոդելը, որում ուսանողը/շրջանավարտը ճանաչվում են որպես համագործակցության մասնակից: Գլխում իրականացվել է նաև բուհ-ձեռնարկություն համագործակցության կապուղիների առկա դասակարգումների վերլուծություն, մշակվել են համագործակցության մակարդակների համար կատարողականի առանցքային ցուցանիշների համակարգը և համագործակցության ամփոփ ինդեքսը:

Ատենախոսության երկրորդ՝ «Բուհ-ձեռնարկություն գործընկերությունը Եվրոպական միությունում և զարգացող տնտեսություններում» գլխում քննարկվել է ԵՄ քաղաքականությունը այս ոլորտում: Կատարվել է չորս երկրի (Շվեդիա, Գերմանիա, Իտալիա, Բուլղարիա) համեմատական վերլուծություն՝ բուհ-ձեռնարկություն համագործակցության լավագույն մոդելները բացահայտելու նպատակով: Գլխում վերլուծվել են նաև Հայաստանում բուհ-ձեռնարկություն գործընկերության իրավական կարգավորումները և ռազմավարությունները: Բացի այդ, կատարվել են միջերկրային

համեմատություններ Հայաստանի և հինգ երկրի միջև, գնահատվել է Հայաստանի դիրքն այդ երկրների շարքում տարբեր ցուցանիշների մասով:

Ատենախոսության երրորդ՝ «Բուհ-ձեռնարկություն գործընկերության համեմատական էմպիրիկ գնահատում» գլխում ներկայացվել է «Բուհ-ձեռնարկություն-կառավարություն-ուսանող/շրջանավարտ» մոդելի շրջանակներում արված էմպիրիկ հետազոտություն, որի համար իրականացվել են հարցումներ Երևանի պետական համալսարանի և Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանի (Իտալիա) ուսանողների/շրջանավարտների, ՀՀ վեց համալսարանի (ԵՊՀ, ՀՊՏՀ, ՀԱՊՀ, ՀԱԱՀ, ՐՊՀ, ՃՇՀԱՀ) վարչական և ակադեմիական ներկայացուցիչների, ինչպես նաև ֆինանսաբանկային և ծառայությունների որոշակի հարյուր կազմակերպության ներկայացուցիչների շրջանում: Կատարվել են հարցումների արդյունքների վերլուծություններ: Գլխում ներկայացվել են նաև արդյունքների հիման վրա իրականացված էկոնոմետրիկ վերլուծությունը և գործընկերության ինտենսիվության մշակված ինդեքսը, ինչպես նաև մեկնաբանվել են արդյունքները:

Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության բովանդակությունից, նպատակից և դրված խնդիրներից բխող եզրահանգումներ և առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը

Հեղինակի կողմից որպես հետազոտության հիմնական արդյունքներ և գիտական նորույթ ներկայացվել է հետևյալը.

1. Մշակվել և ՀՀ պայմաններին է հարմարեցվել «Բուհ-Ձեռնարկություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS)» ընդլայնված մոդելը, որի հիման վրա կառուցվել է համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակ:

2. Հաշվարկվել է բուհ–ձեռնարկություն համագործակցության ինտենսիվության ինդեքսը (Partnership Intensity Index, PII), որի գործարկման նպատակով կիրառվել է օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի մեթոդը:

3. Մշակվել է համագործակցության կապուղիների և ենթատեսակների առանցքային ցուցանիշների գնահատման համակարգ (KPIs), ինչպես նաև առաջարկվել է UIGS ինդեքսի հաշվարկ՝ որպես բուհերի համեմատական վերլուծության և մշտադիտարկման գործիք:

4. Բուհ-ձեռնարկություն համագործակցությունն ուսումնասիրվել է բազմաշահակցային մոտեցմամբ՝ համադրելով բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների/շրջանավարտների և կառավարության տեսանկյունները:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն: Իրականացված հետազոտության արդյունքները և մշակված առաջարկությունները կարող են աջակցել օրենսդիր և գործադիր մարմիններին քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ: Ստացված արդյունքները կարող են արժեքավոր լինել նաև մի շարք այլ խմբերի, մասնավորապես՝ հետազոտողների և մասնագետների համար, որոշակի խնդիրների բացահայտման և լուծման համատեքստում: Ատենախոսության արդյունքները կարող են օգտակար լինել նաև բուհերի և կազմակերպությունների

համար՝ նպաստելով համագործակցության ձևավորմանը, գործընթացների մշտադիտարկմանն ու գնահատմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Մինչ դիտողությունները ներկայացնելը նշենք, որ հետազոտության կատարման ընթացքում հեղինակն օգտագործել և վերլուծել է թեմային վերաբերող տեսական և գործնական նշանակության բազմաբնույթ գիտական աղբյուրներ, հաշվետվություններ, զեկույցներ, վիճակագրական տվյալներ, իրավական փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից անցկացված հարցումների արդյունքները:

Ընդհանուր առմամբ կատարվել է ծավալուն և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի վերլուծություն, որի արդյունքներն արժանի են դրական գնահատականի:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից և մեր կողմից կատարվել են հետևյալ հիմնական դիտողությունները.

1. Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացվել է նաև հետևյալը. «Բուհ-ձեռնարկություն համագործակցությունն ուսումնասիրվել է բազմաշահակցային մոտեցմամբ՝ համադրելով բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների/շրջանավարտների և կառավարության տեսանկյունները» (տե՛ս կետ 4, էջ 7): Կարծում ենք, որ վերոնշյալը, առնվազն այս ձևակերպմամբ դժվար է միանշանակ դիտարկել որպես գիտական նորույթ, քանի որ հավելյալ հիմնավորման կարիք ունի: Յանկացած ուսումնասիրություն հիմնված է որոշակի մեթոդի կամ մոտեցման վրա: Ուստի անհրաժեշտ է նշել, թե ինչ նշանակալի արդյունք և (կամ) նոր գիտելիք է ստացվել նշված մոտեցման կիրառմամբ:

2. Ատենախոսության 1.2 ենթագլխում ներկայացված «Բուհեր-ձեռնարկություններ-կառավարություն-ուսանողներ/շրջանավարտներ (UIGS)» մոդելում համագործակցության ոլորտները բաժանվել են հինգ մակարդակի և յուրաքանչյուրի համար առաջարկվել են կատարողականի առանցքային ցուցանիշներ (KPIs), գնահատականներ (UIGSs) և հաշվարկվել է համագործակցության ամփոփ UIGS ինդեքսը: Հաշվարկների համար օգտագործվել է պարզ թվաբանական միջինի մեթոդը (տե՛ս բանաձևեր (1) և (2), էջ 26-27): Այսինքն, ենթադրվել է, որ այդ ցուցանիշներն ու գնահատականները ունեն հավասար կշիռներ: Սակայն նույն ենթագլխում նշվում է, որ կատարողականի առանցքային ցուցանիշները երեք տեսակի են, ընդ որում՝ անհավասար քանակական բաշխվածությամբ (արդյունքի ցուցանիշներ՝ 66%, արդյունավետության ցուցանիշներ՝ 15%, որակի ցուցանիշներ՝ 19%): Հավասար կշիռների կիրառման դեպքում, օրինակ, արդյունքի գերակշռող ցուցանիշներ ունեցող մակարդակների գնահատականները (տե՛ս աղյուսակ 1.4, էջ 27) կարող են հանգեցնել քանակական արդյունքի արհեստական գերագնահատման՝ որակի կամ արդյունավետության հաշվին: Սա կարող է դիտարկվել որպես գնահատման մեթոդաբանական սահմանափակում: Կարծում ենք՝ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն հարցը, թե ինչու են հավասար կշիռները համարվել ընդունելի, նկատի ունենալով, որ նշված ցուցանիշների մշակումը ատենախոսությունում ներկայացվել է որպես հիմնական արդյունք և գիտական նորույթ (տե՛ս կետ 3, էջ 7):

3. Ատենախոսության 3.2 ենթագլխում հաշվարկվել է գործընկերության ինտենսիվության ինդեքսը (PII), որը ներկայացվել է որպես հիմնական արդյունք և գիտական նորույթ (տե՛ս կետ 2, էջ 7): Ինդեքսը կազմվել է համագործակցության հետևյալ կատեգորիաների (աճող մակարդակների) հիման վրա. 1(մեկանգամյա), 2(կանոնավոր), 3(սերտ), 4(մշտական): Ինդեքսի՝ որպես կախյալ փոփոխականի վերլուծության համար հեղինակը կիրառել է օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի մեթոդը, որի արդյունքում համագործակցության կապուղիները (CC) դիտարկել է որպես միակ վիճակագրորեն նշանակալի դրական գործոն, ինչպես նաև համագործակցության ինտենսիվությունը մեծացնող հիմնական որոշիչ գործոն: Սակայն արված ենթադրության համաձայն՝ համագործակցության կապուղիների ազդեցությունը պետք է լինի նույն մեծությամբ գործընկերության ինտենսիվության ինդեքսի բոլոր անցումների վրա: Այսպես, համագործակցության կապուղիների OR=1.190 գործակիցը (տե՛ս աղյուսակ 3.14, էջ 123) ենթադրում է, որ մեկ լրացուցիչ համագործակցության կապուղին 19%-ով մեծացնում է ինչպես «1(մեկանգամյա)-ից՝ 2(կանոնավոր)» անցման հավանականությունը, այնպես էլ, նույն չափով՝ «3(սերտ)-ից՝ 4(մշտական)» անցման հավանականությունը: Սակայն դժվար է միանշանակ պնդել, որ գործընկերության ինտենսիվության առումով տարբեր մակարդակներում գտնվող բուհերի համար միևնույն մեկ լրացուցիչ կապուղին նույն ազդեցությունը կունենա: Ելնելով սրանից՝ կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ իրականացնել այդ ենթադրության վիճակագրական ստուգում, իսկ ենթադրության խախտման դեպքում՝ կիրառել այլընտրանքային մոտեցում (օրինակ՝ մասնակի կամ ընդհանրացված օրդինալ լոգիստիկ ռեգրեսիա):

4. Ատենախոսության շարադրանքի տարբեր հատվածներում հեղինակը բնորոշել է բուհ-ձեռնարկություն համագործակցությունը ՀՀ-ում՝ որպես «թույլ, ոչ ամրողջությամբ ինստիտուցիոնալացված»: Նպատակահարմար կլիներ, որ խնդրին անդրադառնալու հետ մեկտեղ, հետազոտության ընթացքում բացահայտվեին ինստիտուցիոնալացման գործընթացները խոչընդոտող և (կամ) դանդաղեցնող գործոնները, ինչպես նաև ներկայացվեին դրանք վերացնելու հնարավոր ուղիները: Սա կնպաստեր աշխատանքի գիտական և կիրառական նշանակության մեծացմանը: Կարծում ենք՝ աշխատանքում այլ երկրների փորձի և իրավիճակի ուսումնասիրությունն ու ծավալուն ներկայացումը, նախևառաջ, այս խնդրի լուծմանը պետք է միտված լիներ:

5. Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում առաջարկվում է, ՀՀ-ում իրականացնել «Ձեռնարկատիրական վաուչերների» ծրագիր (տե՛ս կետ 10, էջ 140): Կարծում ենք՝ ծրագիրը լրամշակման կարիք ունի, մասնավորապես՝ իրականացման և վերահսկողության կառուցակարգերի, կազմակերպությունների ընտրության չափանիշների, ֆինանսավորման աղբյուրների, ծրագրի արդյունավետության գնահատման չափանիշների և հնարավոր ռիսկերի հստակեցման առումով, ինչը կամրապնդեր առաջարկության հիմնավորվածությունը:

6. Ատենախոսությունում հանդիպում են նաև տեխնիկական բնույթի բացթողումներ, օրինակ՝ օգտագործված գրականության ցանկում աղբյուրների ըստ ենթաբաժինների խմբավորման թերություններ, կրկնվող մտքեր (նախադասություններ), աղյուսակների բովանդակության և ձևավորման թերություններ, տառերի վրիպակներ և այլն:

Եզրակացություն

Նշված դիտողությունները կրում են մասնակի բնույթ և չեն կարող բացասական ազդեցություն ունենալ ատենախոսության նշանակության և արդյունքների վրա: Դրանք ունեն կառուցողական բնույթ և միտված են հեղինակի հետագա հետազոտական գործունեության որակի բարելավմանը:

Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի ատենախոսությունում առաջադրված և հիմնականում լուծված են Հայաստանի Հանրապետության համար կարևորություն ունեցող խնդիրներ:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածում (այդ թվում՝ 5-ը համահեղինակությամբ): Նշված հոդվածներում բազմակողմանի անդրադարձ է կատարվել հետազոտվող թեմային:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին և հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի կառավարման և գործարարության
ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու Գոհար Արայի Բարխուդարյան

Գոհար Արայի Բարխուդարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Մ. Վ. Հովհաննիսյան

« 14 » 08 2026թ.